# Ֆադեյ Սարգսյանը նշանակվել է ՀՀ վարչապետի խորհրդական




ԵՐԵՎԱՆ, 10 ԱՊՐԻԼ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: ՀՀ վարչապետի ապրիլի 10-ի որոշմամբ, ԳԱԱ նախկին նախագահ Ֆադեյ Սարգսյանը նշանակվել է ՀՀ վարչապետի խորհրդական: Այս մասին այսօր ԳԱԱ ընդլայնված նիստում տեղեկացրեց ՀՀ վարչապետ Անդրանիկ Մարգարյանը:

Հիշեցնենք, որ ՀՀ կառավարության ապրիլի 6-ի որոշմամբ դադարեցվել է Ֆադեյ Սարգսյանի լիազորությունները՝ համաձայն իր դիմումի: Մինչեւ օրենսդրությամբ սահմանված կարգով ՀՀ ԳԱԱ նախագահի ընտրվելը՝ ակադեմիկոս Սերգեյ Համբարձումյանը նշանակվել է ՀՀ ԳԱԱ նախագահի պաշտոնակատար: